

հայերուն մէջ: — Սարապաշեան, հճ. Գարուստեան, Յովս. Յարութիւնեան, Յկ. Պոյաճեան, Գ. Շամգուլեան, Տէր Մատթէոսեան եղբարք, Օսմանյեան եղբարք: Նաեւ բաւականաչափ թորկեր (տեղկեհա՛) հայ եւ յոյն տուներու մէջ: Հարկւրաւոր թարմատի աղջիկներ անխոնջ դորգ կը գործէին առաւօտէն մինչեւ արեւմուտք՝ իրենց շրթներուն ծայրը պտտցնելով երգի ու շաղակրատութեան փշուրներ:... Կուտինահայ գորգը ծանօթ էր իր նկարէն ծաղիկներով, ներդաշնակ՝ զոյներով եւ պարսկականի նմանելու ձգտումով: Անկէ մերթ առաջ կու դային գեղարուեստի իրական գործեր, որոնց դնորդ Իզմիրի գորգի վաճառականները, սակայն, ցաւալի է որ, շատ նախանձելի շահ մը չէին թողուր գորգագործին ձեռքը»⁽⁴⁹⁾:

Սաղնաւէի վիւայէքը Էրզուրում կ'ըսէ որ, «Երզնկայի մէջ կապերտանման զանազան հիւսուածեղէններ» կը շինեն: Սրուանձտեանց կը վկայէ որ «Տիգրանակերտի մէջ... բուրդ, կապերտ եւ այլ փրոցներ»⁽⁵⁰⁾ կը պատրաստեն: Արդարեւ նոյնիսկ հին ատենները Տիգրանակերտ նշանաւոր էր իր հիւսուածեղէններուն համար: «Մուղատասի կ'ըսէ թէ Ամիդ (Տիարպէքիր, Տիգրանակերտ) նշանաւոր էր իր բուրդէ արտադրութեանց համար, որոնք գլխաւորաբար կ'արտածուէին»⁽⁵¹⁾: Միրախորեան 1884ին կը գրէ. «Ի Բաբերդ կը գործածուին նաեւ այլ եւ այլ տեսակ գորգեր»⁽⁵²⁾: Ուր՝ ուրիշի մը համաձայն՝ «մանաւանդ ոսկեթել մետաքսեայ գորգերը գործելը»⁽⁵³⁾ յառաջացած էր, որոնք ամէն կողմ նշանաւոր էին ոչ միայն այժմ՝ այլ անցեալին ալ, ինչպէս որ կը վկայէ 1650ական թիւերուն՝ Էվլիա Էֆէնտի թուրք աշխարհագիրը:

Մեղի կը հաւատաւորի որ 1877էն առաջ «Ապերի, Թորդումի, Կիսկիմի, Նարիմանի, Օլթիի, Արտանուշի, Օքրորապետի, Սալթելի, Արդվինի, Մաճիխելի կտաւ, շալ, մետաքս գործող, շիլա եւ կապոյտ ներկող, մանուսա, գեղի, գողնոց, ջեջիմ, կապերտ եւ խալի գործող, չիթ դաճող, ծաղիկ բանող»⁽⁵⁴⁾ եւն.՝ բոլորն ալ հայեր էին եւ եղած են դարերով: Թուրքաւ (Եւդոկիա) նշանաւոր անցեալով՝ այլ անձանօթ

(49) Կուտինա: — Գրեց՝ Առնակ: «Հայրենիք» ամս. 1937 Յուլիս, էջ 99:

(50) Թորոս Աղբար, Բ. մաս, էջ 224: Ժամանակակից դորգ մը՝ վաճան Միրախորեան կ'ըսէ. «Ժամանակին Թուրքիոյ ստալյագործութեան սրտ ճիւղերը համաշխարհային հռչակ ունէին: Այդ համբաւին արժանի էին յատկապէս Տիգրանակերտի գորգերը, բրդական քիլիմները»: (Նոր Թուրքիոյ Տնտեսական վիճակը: — «Հայրենիք» ամս. 1932, Պոսթոն, թիւ 8, էջ 151):

Սակայն քրտական այս քիլիմներուն մեծ մասն ալ հայու գործ կարելի է նկատել: Տէրսիմի Միրաբեան հայ ցեղին (8,000 հոգի) կիներն ու աղջիկները ճամառ-ձմեռ անոնց դրազումը կազմած են բուրդ գգել, մանել, ներկել եւ յետոյ դայն գորգի, կապերտի ու զուլպայի վերածելը: (Տէրսիմ: — Գրեց՝ Առնակ: — «Հայրենիք» ամս. 1937 Հոկտ. էջ 55):

(51) A History of Oriental Rugs before 1800. — London, 1908, by Dr. F. R. Martin.

(52) Նկարագրական ուղեւորութիւն ի Հայ Գաւառ: — Կ. Պոլիս, 1884, Ա. մաս, էջ 14:

(53) Աշխարհ. Հայաստանի: — էջ 188:

(54) Ծորոխի Աւագանը: — Արաբեա, ի «Հանդ. Ամս.», 1926, էջ 281: